Քաղաքացիական
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

21 ՄԱՐՏԻ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 2012թ., թիվ 11 (400)

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏՈՒՄ

Կիրականացվի “Հին Երևան” քաղաքաշինական ծրագիրը

Անցյալ շաբաթ տեղի է ունեցել ՀՀ կառավարության հերթական նիստը, որը վարել է ՀՀ վարչապետ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԸ:

Գործադիրը Երևանի քաղաքապետին լիազորել է Հայաստանի Հանրապետության անունից “Ի ԷՄ ՍԻ” և “Գլենդել Հիլզ”

ՓԲԸ-ների, “Սերգե-Ագոպիգ-Դեր-Սահագույան” ՍՊԸ-ի հետ կնքել Երևան քաղաքի Արամի, Փ. Բուզանդի, Ե. Կողբացու փողոցներով պարփակված տարածքում սեփականության օտարման ընթացքում պետության և ձեռքբերողի իրավունքները, պարտականություններն ու պատասխանատվությունը սահմանող պայմանագրեր: Կնքվող պայմանագրերն ուժի մեջ են մտնում նշված տարածքների նկատմամբ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու՝ ՀՀ կառավարության որոշումն ուժի մեջ մտնելու պահից: Այդ պահից ոչ ուշ, քան երեք տարվա ընթացքում Երևանի Մ. Մաշտոցի պողոտայի N 22/1 հասցեում գտնվող զբոսայգում Երևանի ենթակայության “Կենտրոն-կանաչապատում” ՓԲԸ-ի կողմից տեղադրված տաղավարները ենթակա են ապամոնտաժման՝ “Հին Երևան” քաղաքաշինական ծրագրի իրագործումն ապահովելու համար: Պայմանագրերի կնքումից հետո հնարավոր կլինի նշված տարածքների նկատմամբ ճանաչել բացառիկ՝ գերակա հանրային շահ և մասնավոր ներդրումների հաշվին կորսված և քանդված պատմության և մշակույթի հուշարձանների տեղափոխման եղանակով տարածքում վերստեղծել քաղաքաշինական գեղագիտական միջավայր: Քանի որ այս հարցը վերջին շրջանում քաղաքական հնչեղություն է ստացել, վարչապետ Տիգրան Սարգսյանը պարզաբանումներ է տվել “Հին Երևան” քաղաքաշինական ծրագրի վերաբերյալ.

“Հարգելի՛ գործընկերներ, այս հարցը քաղաքական հնչեղություն է ստացել վերջին շրջանում, և ես ցանկանում եմ որոշակի պարզաբանումներ տալ, որպեսզի մեր քաղաքական դիրքորոշումը հստակ և հասկանալի լինի բոլորի համար:

Առաջին՝ քաղաքապետի հետ միասին հանդես ենք եկել քաղաքական հայտարարությամբ. այն է՝ մենք դեմ ենք, որ Մաշտոցի պուրակում մշտական տաղավարներ լինեն, և դրանով իսկ փարատել ենք մեր քաղաքացիների՝ այս հարցի առնչությամբ ունեցած մտավախությունը:

Ճարտարապետների հետ ունեցած մեր հանդիպման ժամանակ հարց հնչեցվեց, թե այդ ժամանակավորն ինչքան է: Այստեղ էլ պատասխանը հստակ է՝ առավելագույնը երեք տարի. դա պայմանավորված է “Հին Երևան” նախագծի իրականացմամբ, քանի որ Մաշտոցի պուրակը “Հին Երևանի” հենց մուտքն է լինելու, և ճարտարապետական

լուծումներն էլ տվել է հենց քաղաքապետարանը: Այսինքն՝ “Հին Երևան” նախագծի հեղինակը քաղաքապետարանն է, և ինքն է այդ ծրագիրն իրականացնելու:

Երրորդ հարցն իրավական լուծումների վերաբերյալ է: Մենք նաև նամակ ենք ստացել հասարակական նախաձեռնությունների, տարբեր կազմակերպությունների կողմից, թե արդյոք իրավական լուծումներն իրավաբանորեն բխո՞ւմ են մեր օրենքների պահանջներից: Այդ առումով էլ քաղաքապետը զեկուցեց, որ համապատասխան եզրակացություններ են տրվել, և օրենքի խախտումներ չկան:

Չորրորդ հարց. մենք շահագրգռված ենք, որպեսզի այս հարցի շուրջ մեր քաղաքացիների հետ լինի համերաշխության և համաձայնության մթնոլորտ: Առաջին խոստումը, որ Աբովյան փողոցում առկա տաղավարների վերաբերյալ տրվել էր քաղաքապետարանի կողմից, այն է, որ այն տաղավարները, որոնք ժամանակավոր չէին, այլ մշտական տաղավարներ էին՝ սեփականության իրավունքով, կապամոնտաժվեն: Այդ խոստումը կատարվել է:

Հիմա երկրորդ խոստումը, որ արձանագրում ենք այսօր մեր որոշման մեջ և ընդունում ենք ի գիտություն, որ սրանք նույնպես երեք տարվա ընթացքում ապամոնտաժվելու են:

Հաջորդ հարցադրումը. մենք մեր ընդդիմախոսների կարծիքը հարգում ենք. տարբեր ձևաչափերով նրանց հետ քննարկում ենք լուծումները: Եվ այսօր քաղաքապետարանի առաջարկած լուծումը, կարծում եմ, երևանցիների համար ընդունելի կլինի. բոլորի շահերը մենք հաշվի կառնենք, այդ թվում՝ նաև սեփականատերերի:

Հինգերորդ՝ ճարտարապետների հետ ունեցած մեր հանդիպման ժամանակ առաջարկություն եղավ, որ փոքր Երևանում՝ Երևանի կենտրոնում, կառուցապատման կանոնները լինեն ավելի խիստ, և սահմանվեն լրացուցիչ նորմեր, որոնք կարգելեն փոքր կենտրոնում բազմաբնակարան, բազմահարկ շենքերի կառուցումը, որոնք հստակորեն կպաշտպանեն հին կառույցները, ընթացակարգեր կսահմանեն, թե որոշումներն ինչպես են ընդունվում փոքր կենտրոնի կառուցման վերաբերյալ: Մենք քաղաքապետի հետ միասին խոստացանք, որ այդպիսի օրենքի նախագիծ կմշակենք: Այսօր մենք ձևավորում ենք աշխատանքային խումբ, որն աշխատելու է այդ օրենքի նախագծի վրա: Հրավիրում ենք նաև հասարակական տարբեր նախաձեռնությունների ներկայացուցիչներին, որպեսզի ներկայացնեն իրենց թեկնածուին՝ աշխատանքային խմբում ընդգրկելու համար, որպեսզի այդ օրենքի նախագծի վրա միասին աշխատենք: Հարգելի՛ գործընկերներ, կարծում եմ՝ կհամաձայնեք, որ այս մոտեցումը հաշվի է առնում բոլոր կողմերի շահերը և տալիս է այնպիսի լուծում, որը նաև քաղաքացիների կողմից ընդունելի կլինի: Ուստի առաջարկում եմ այս որոշման նախագիծն ընդունել և դրանով իսկ մեր քաղաքացիներին հստակ պատասխան տալ ժամկետների վերաբերյալ. առավելագույն ժամկետը լինելու է երեք տարին”:

Ճանաչել Սփյուռքը և բացահայտել նրա ներուժը

Երեք տարի առաջ, երբ երկրի գործադիր մարմնում ստեղծվեց ևս մեկ պետական կառույց՝ Սփյուռքի նախարարությունը, ոմանք թերևս տարակուսանքով ընդունեցին այդ փաստը. ի՞նչ կարիք կար ունենալու առանձին կառույց, եթե հանրապետության գրեթե բոլոր գերատեսչություններում կային Սփյուռքի հետ կապի բաժիններ: Այսօր էլ երբեմն այս հարցը հնչում է, ուստի Սփյուռքի նախարարության մամուլի և հասարակության հետ կապերի վարչության պետ ԹԵՎՈՍ ՆԵՐՍԻՍՅԱՆԻ հետ ունեցած մեր զրույցը սկսեցինք հենց այդ հարցադրումով:

- Պարո՛ն Ներսիսյան, ինչո՞վ էր պայմանավորված Սփյուռքի նախարարության ստեղծման անհրաժեշտությունը:

- Ոչ միայն նման կառույցի ստեղծման անհրաժեշտություն կար, այլև այդ հարցում մենք ուշացել ենք ամբողջ երկու տասնամյակ: Այն պետք է ստեղծվեր Հայաստանի անկախության հռչակումից անմիջապես հետո: Հենց միայն այն պատճառով, որ մեր ժողովրդի երկու երրորդն ապրում է դրսում: Մենք բոլորս շատ լավ գիտենք, թե ինչ ներուժ ունի մեր Սփյուռքը. գիտության, արվեստի բնագավառներում հայազգի բազմաթիվ ներկայացուցիչներ հանրահայտ են ողջ աշխարհում: Նախարարության գլխավոր խնդիրներից մեկը այդ ներուժի բացահայտումն է, այնուհետև՝ հնարավորինս նպաստելը, որ այն աշխատի ամբողջ ազգի և Հայաստան պետության համար, պետության բարգավաճման համար: Մյուս կողմից՝ նախարարությունն այն կառույցն է, որն ավելի է մոտեցնում Սփյուռքը Հայրենիքին: Իսկ նախարարության երեքամյա գործունեությունն արդեն իսկ լիարժեք պատասխան է այն հարցին, թե Սփյուռքի հետ աշխատող առանձին գերատեսչություն ունենալու կարիք կա՞ր:

- Ձեր ղեկավարած վարչությունն է հանրությանը ներկայացնում Սփյուռքի նախարարության գործունեությունը. ի՞նչ սկզբունքներով եք առաջնորդվում:

- Հանրապետությունում և Սփյուռքում ձեռք բերած հեղինակությունը այս կառույցը ներկայացնող բոլոր պետական ծառայողների և հատկապես նրա ղեկավարի՝ Հրանուշ Հակոբյանի հետևողական աշխատանքի արդյունքն է: Մեր վարչությունն աշխատում է մամուլի և հասարակական կազմակերպությունների հետ: Գերխնդիրը քարոզչություն իրականացնելն է: Վարչությունը լրատվամիջոցներով ճիշտ և անկողմնակալ տեղեկատվություն է տրամադրում նախարարության և նախարարի գործունեության վերաբերյալ (հանդիպումներ, աշխատանքային այցեր, ծրագրեր, քննարկումներ և այլն):

Ոչ միայն վարչության, այլև ողջ նախարարության առաջին և գլխավոր սկզբունքը հետևյալն է. Սփյուռքին պետք է ներկայանալ պարկեշտ, ազնիվ մարդկային որակներով: Սփյուռքի հետ աշխատելու համար մենք պետք է լավ ճանաչենք այն: Իսկ Սփյուռքը խիստ բազմաշերտ է. հայ ժողովուրդը սփռված է գրեթե ամբողջ աշխարհում, և տարբեր երկրներում ու տարբեր ժամանակահատվածներում ձևավորված համայնքները շատ տարբեր են իրարից: Անգամ մշակույթով են տարբեր, հոգեբանությամբ, լեզվամտածողությամբ: Չի կարելի բոլորի հետ նույն լեզվով, նույն բառերով խոսել:

- Դրան համապատասխա՞ն են մշակվել նախարարության մամուլի և հասարակության հետ կապերի վարչության գործառույթները:

- Մեր վարչության գլխավոր գործառույթներից մեկը Սփյուռքի հայկական համայնքներն ուսումնասիրելն ու ճանաչելն է: Ընդ որում, ճանաչել ոչ միայն համայնքի նախագահի ներկայացմամբ, այլև ուսումնասիրել նրանց կյանքն ու գործունեությունը սեփական հնարավորություններով: Կարդում ենք նրանց լրատվամիջոցները, այցելում կայքեր, փորձում հասկանալ, թե որտեղ ինչ հետաքրքրություններ ու խնդիրներ կան: Ի դեպ, տարբեր վայրերում դրանք շատ տարբեր են: Տարբերություն կա հատկապես ավանդական սփյուռքի և վերջին տարիներին ձևավորված սփյուռքի միջև: Ցավոք, հատկապես վերջիններս ինտեգրման խնդիր ունեն և իրենց երեխաներին միտումնավոր կտրում են հայկական միջավայրից՝ այդ գործընթացն արագացնելու համար:

Անշուշտ, երբեմն մեր գործառույթների շրջանակն ավելի է ընդարձակվում, քան պարզապես ամրագրված է թղթի վրա: Օրինակ՝ Հայաստան-Սփյուռք գործակցության խորհրդանիշը ստեղծվել է հենց մեր վարչության ջանքերով: Մենք մրցույթ հայտարարեցինք, որին և՛ Հայաստանից, և՛ Սփյուռքից 120 նախագիծ մասնակցեց: Ի վերջո, ընտրեցինք Մարտիրոս Սարյանի գործը, որը նախկինում Սփյուռքի հետ մշակութային կապի կոմիտեի խորհրդանիշն էր: Մի փոքր շտկում կատարվեց. հավերժության նշանն ավելացավ և վրայի գրությունը՝ “Հայաստան-Սփյուռք գործակցություն”, և խորհրդանիշը մտավ շրջանառության մեջ:

- Նախարարության թերևս հիմնական առաքելություններից մեկը Սփյուռքը հանրությանը հնարավորինս համապարփակ ներկայացնելն է:

- Բնականաբար, և այդ առաքելությունն իրականացնելու համար մենք տարբեր եղանակներ ենք կիրառում: Մեր գործունեության շրջանակում առանցքային տեղ են զբաղեցնում զանազան ծրագրեր՝ “Արի տուն”, “Մեր մեծերը”, Երիտասարդ առաջնորդների ու երիտասարդ լրագրողների ամառային դպրոցը և այլն: Կարևոր ու անհրաժեշտ են մասնագիտական համաժողովները, որոնց մասնակցում են տարբեր երկրներում տվյալ մասնագիտությունն ունեցող հայերը: Կազմակերպվել են ճարտարապետների, սրտաբանների, լրագրողների համաժողովներ, որոնք շարունակական են լինելու: Այդ հավաքները աշխարհասփյուռ հայերին միմյանց հետ ծանոթանալու և համատեղ ծրագրեր իրականացնելու հիանալի հնարավորություն են ընձեռում: Մի օրինակ բերեմ ճարտարապետների համաժողովից. Ֆրանսիայից 14 ճարտարապետներ էին մասնակցում համաժողովին, որոնցից միայն չորսն էին իրար ծանոթ: Բացի այդ, պարզվեց, որ Ռուսաստանի և Ֆրանսիայի ճարտարապետներն աշխատում են նույն միջազգային ծրագրի շրջանակներում և այդ մասին տեղյակ չեն: Նրանք միացրին իրենց ուժերը, ինչի արդյունքում, կարծում ենք, միանշանակ ավելի հետաքրքիր ծրագիր կստացվի:

Սփյուռքը հանրությանը ներկայացնելու գործում անգնահատելի է նախարարության պաշտոնական կայքի, ինչպես նաև “Հայերն այսօր” եռալեզու թերթի ներդրումը:

- Համագործակցո՞ւմ եք հասարակական կազմակերպությունների հետ:

- Անկեղծ ասած՝ Սփյուռքում հայկական համայնքներն իրենք են ներկայանում որպես առանձին հասարակական միավորումներ և նույնիսկ գրանցվում են տվյալ երկրի Արդարադատության նախարարությունում որպես հասարակական կամ

մշակութային կազմակերպություն: Մենք աշխատում ենք նրանց բոլորի հետ, նաև Հայաստանում կան նրանց գրասենյակները: Հայաստանյան ՀԿ-ները հաճախ մեզ են ներկայացնում ծրագրեր՝ առաջարկելով համագործակցություն: Մենք աշխատում ենք Ինֆորմացիայի ազատության կենտրոնի, Հայաստանի ժուռնալիստների միության, Լրատվամիջոցների համահայկական ընկերակցության, Կանանց միջազգային միավորման, Հայ-ամերիկյան առողջության կենտրոնի, բոլոր համահայկական կառույցների գրասենյակների, ինչպես նաև, "Ուրբաթ", "Դե ֆակտո", "Հենարան", "Հայելի" և այլ ակումբների ու տարբեր կազմակերպությունների հետ: Ի դեպ, հոկտեմբերի սկզբին Սփյուռքի նախարարության, Հայաստանի ժուռնալիստների միության և Լրատվամիջոցների համահայկական ընկերակցության նախաձեռնությամբ կկայանա նաև Հայ լրագրողների 6-րդ համահայկական համաժողովը:

Վարչության գործառույթներից է նաև անհատ քաղաքացիների հետ տարվող աշխատանքը: Նշենք, որ նախարարության 3 տարվա գործունեությունն ամփոփող ֆիլմը պատրաստ է և արդեն տարածվում է: Պատրաստ է նաև կառավարության հանձնարարությամբ ստեղծված մեկ այլ ֆիլմ՝ նվիրված անկախության 20 տարիներին և Սփյուռքի դերին անկախ Հայաստանի կայացման գործում:

- Ինչպե՞ս եք վերաբերվում քննադատությանը. ցանկացած աշխատանքում սխալներ թույլ տալու հավանականություն միշտ կա:

- Սփյուռքի նախարարությունն աշխատում է բաց ու թափանցիկ. դա նաև նախարարի պահանջն է: Քննադատությունն ընդունում ենք ըմբռնումով, եթե, իհարկե, այն ինքնանպատակ չէ և չի արվում չարամտորեն, այլ կառուցողական է: Սրտացավ քննադատության դեպքում ուղղում ենք մեր սխալը, մոտեցումները ճշգրտվում են. չէ՞ որ ամեն ինչ նոր է այս բնագավառում: Անգամ պատահում է, որ նախարարը հրավիրում է քննադատողին և խնդրում, որ առաջարկություն անի, եթե ինչ-որ բան նրա կարծիքով սխալ է արված: Ինչպես ասում են՝ բոլորն էլ սխալվում են, եթե աշխատում են:

- Ձեր կարծիքով, ինչպիսի՞ն պետք է լինի պետական կառավարման համակարգում և մասնավորապես Սփյուռքի նախարարությունում աշխատող պետական ծառայողը:

- Գուցե ավելորդ է ասել, որ պետական համակարգում աշխատողն առաջին հերթին պետք է լինի շիտակ, ազնիվ: Մարդկային հատկանիշներ, որոնք ցանկացած հարաբերությունների նախապայմանն են: Իսկ Սփյուռքի նախարարության աշխատողն առաջին հերթին պետք է լինի բարեհամբույր, լավ ճանաչի Սփյուռքը: Երկրորդ՝ պետք է զարգացած լինի: Խոսքը վերաբերում է և՛ լեզվի իմացությանը, և՛ ընդհանուր զարգացածությանը: Մեզ մոտ լուրջ ուշադրություն է դարձվում լեզուների իմացությանը: Համակարգչի իմացության մասին խոսելը նույնիսկ ավելորդ է. 21-րդ դարում անհնար է պատկերացնել արդյունավետ աշխատանք՝ առանց տեխնոլոգիաների իմացության: Նախարարը շատ կարևորում է նաև աշխատողի չափավոր, աշխատանքային կեցվածքը, հագնվելու մշակույթը: Ավելացնենք, որ պակաս կարևոր չէ մարդու նկատմամբ ցուցաբերվող պետական պաշտոնյայի ուշադրությունը: Պետք է հիշենք, որ մենք պետություն ենք ներկայացնում և պարտավոր ենք հոգալ նրա հեղինակության մասին:

Հարցազրույցը՝ ԱՆՈՒՇ ՍԱՄՎԵԼՅԱՆԻ

Ամենակարևորը մարդկային ջերմ փոխհարաբերություններն են

Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական ծառայության համակարգի հիմնադրման տասնամյակի կապակցությամբ համակարգի մի խումբ քաղծառայողներ համակարգի ներդրման, կայացման և զարգացման գործում ունեցած իրենց ավանդի համար արժանացան պատվոգրերի ու շնորհակալագրերի: ՀՀ ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի պետ ԳԱՅԱՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ նույնպես ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից պարգևատրվեց ՀՀ ՔԾ խորհրդի նախագահի շնորհակալագրով՝ “անբասիր աշխատանքի համար”: Իսկ նրա աշխատանքային տարիները ճիշտ այնքան են, որքան մեր երկրում գոյություն ունի քաղաքացիական ծառայության համակարգը: Այնպես է ստացվել, որ մասնագիտությամբ ինժեներ Գայանե Հարությունյանն իր աշխատանքային գործունեությունը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունում սկսել է 2001 թվականից և ակամա դարձել մեր երկրում ներդրվող նոր համակարգի շինարարներից մեկը: Իր առաջին շնորհակալագիրը նա ստացել է 2003 թվականին՝ քաղաքացիական ծառայության մրցույթները պատշաճ կազմակերպելու համար: Եվ երբ 2007 թվականին նրան վստահվեց աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի պետի պաշտոնը, Գայանե Հարությունյանը հավատարիմ մնաց իր աշխատառճին՝ առաջնահերթ համարելով մարդկանց լսելու և հասկանալու ունակությունը, աշխատանքային հարաբերությունների հիմքում դնելով մարդկային պարզ և ջերմ հարաբերությունները: Երբ գործ ունես մոտ ութ հարյուր հոգուց բաղկացած անձնակազմի հետ, պարզապես պարտավոր ես մարդկանց ըմբռնումով մոտենալ և համբերատար լինել: Գայանե Հարությունյանը կադրերի ընտրության հարցում մասնագիտական գիտելիքներից զատ նաև կարևորում է մարդու տեսակը. “Մասնագիտական գիտելիքներ ու փորձ միշտ կարելի է ձեռք բերել, իսկ մարդկային որակներ... Աշխատանքային կոլեկտիվում չափազանց կարևոր է ստեղծել առողջ, հաճելի մթնոլորտ՝ արդյունավետ աշխատելու համար: Ինձ համար անընդունելի են անառողջ հարաբերությունները, անազնվությունը, անպարտաճանաչությունն ու անպատասխանատվությունը... Բարեբախտաբար մեր աշխատակազմում նման երևույթներ չկան: Ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմն ունի 334 քաղաքացիական ծառայողներ, որոնց 73 տոկոսը կանայք են: Քաղծառայողների 88 տոկոսն ունի բարձրագույն կրթություն, 50 տոկոսից ավելին տնտեսագետներ են, քիչ չեն գիտական կոչումների արժանացած աշխատակիցները”:

Սա հենց Գայանե Հարությունյանի սիրած թվերի լեզուն է, ինչի վրա է հիմնված պետական այս կառույցի ողջ գործունեությունը: Թվերը, որոնց տիրապետում են Ծառայության աշխատակիցները, կարող են առաջին հայացքից չոր ու անհոգի թվալ, սակայն իրենց խորքում այնքա՛ն կարևոր տեղեկատվություն են պահում: Նրանք կարող են ուրախություն ու հիասթափություն ծնել՝ պայմանավորված իրենց պարունակած տեղեկատվությամբ: Սակայն Ազգային վիճակագրական ծառայության

աշխատակիցները պարտավոր են բոլոր այդ թվերին նույն գորովանքով ու պատասխանատվությամբ վերաբերվել. դրանք ներկայացնում են մեր երկրի, մեր պետության դեմքը, հաջողություններն ու ձեռքբերումները, ինչպես և իրենք են ներկայացնում պետական այս կառույցի դեմքն իրենց բարեխիղճ ու կարգապահ աշխատանքով: Գայանե Հարությունյանի հավաստմամբ՝ կոլեկտիվում այդ հատկանիշները բնորոշ են բոլորին՝ ղեկավարից մինչև կրտսեր ծառայող: Այլ կերպ չեն էլ կարող. այստեղ յուրաքանչյուրի աշխատանքը "մանրադիտակով" է ստուգվում…

Այս տասը տարվա ընթացքում Ազգային վիճակագրական ծառայությունում ատեստավորման փորձությունը չհաղթահարելու և աշխատանքից դուրս մնալու ամենաքիչ դեպքերն են գրանցվել. "ձեռքի մատների վրա կարելի է հաշվել": Այս կառույցում չեն լինում կոնֆլիկտներ, երբևէ որևէ առիթով ծառայողական քննություն չի անցկացվել, կիսամյակային հաշվետվություններին բացասական գնահատական չի տրվել: Կադրերի հոսքն էլ մեծ չէ. հիմնականում կրտսեր պաշտոններ զբաղեցնողներն են գնում՝ ավելի բարձր պաշտոն զբաղեցնելու: Գնում են գիտելիքներով հարստացած:

Ի դեպ, Ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի անձնակազմի ավելի քան 30 կին քաղծառայողներ գարնանային տոնի կապակցությամբ ինքնատիպ նվեր ստացան. նրանց շնորհվեց իրենց պաշտոնի համար նախատեսված առավելագույն դասային աստիճան: Շնորհավորելով իր կին գործընկերներին և բոլոր հայ կանանց՝ տոնի առթիվ՝ Գայանե Հարությունյանը ցանկանում է, որ հայ կինը ժպտալու, ուրախանալու առիթներ շատ ունենա... իսկ ինքն իրեն համարում է անուղղելի լավատես և համոզված է՝ ինչ էլ լինի, կյանքը հիասքանչ է...

ԱՆՈՒՇ ՍԱՄՎԵԼՅԱՆ



“Ախ, կի՛ն - ցնորք...”

***

Երազում եմ այն Երկիրը հեռավոր,
Ուր մարմինը, սեգ մարմինը՝ ու հոգին՝
Աննյութացա՛ծ ու նյութացա՛ծ, լուսավոր՝
Ողջակիզվեն Արևի՛ մեջ, քույր իմ, կին:

Ու միանա՛ն սեգ մարմի՛նը ու հոգի՛ն...
Ու չլինի՛, ու չլինի՛ դու ու ես:
Աննյութացած - դու մարմնանաս - ու կրկին
Հրաշք դառնաս՝ անդունդները արևես...

Եվ երբ կանչեմ - դու գրկիս մեջ արևից
Ու տարփանքի՛ց, տառապանքի՛ց շիկացած -
Գրկես թևերս մանկական ու անբիծ -
Ախ, կի՛ն - ցնորք, քո՛ւյր, Շամիրամ ու Աստվա՛ծ:

***

Կարինե Քոթանճյանին

Գիշերը հոգնած նստել սենյակում,
Նայել շորերիդ ծալքերին լուսե,
Ու լույսը լամպի տխրությամբ անհուն
Գուրգուրե հոգուս հոգնությունը սև:

Լուռ, անձայն նստել մի բաժակ թեյի:
Ձեռքերդ դնես հոգնած ծնկներիս:
Ու հին, փոշեպատ հայելիների
Մշուշում կորած՝ խոնջանա հոգիս:

Եվ սիրել բախտը՝ պարզ ու երկրային,
Ցանկություններդ մեղկ ու կամակոր -
Եվ սիրել քո տան փոշապատ ուղին
Եվ սենյակներիդ տխրությունը գոլ...

Հեռացումի խոսքեր

... Ես երգել եմ քո հոգին, քո ժպիտը լուսավոր,
Քո աչքերի, քո դեմքի տխրությունը սրբազան.
Կյանքս թողած անհունում - ես երգել եմ սերը խոր
Ու կարոտը թևերիս, որ երբե՛ք քեզ չհասան...

Մոտենում է, քո՛ւյր իմ, ա՜խ, իրիկունս միգամած.
Ես ի՞նչ անեմ, որ հոգիս չհեծկլտա կարոտից.
Ինչպե՞ս, ինչպե՞ս ընդունեմ կյանքիս բաժակը քամած,
Որ ձեռքերս չդողան, որ օրերս ներեն ինձ:

Գուցե՞ հանկարծ կասկածեմ, չհավատամ ինքս, ես,
Ու սուտ թվա իմ հոգուն քո կարոտը սրբազան...
- Ի՜նչ էլ լինի, քո՛ւյր իմ, քո՛ւյր, հեռանալիս չանիծե՜ս
Խե՜ղճ կարոտը թևերիս, որ երբե՜ք քեզ չհասան...

***

Ինչքան որ հուր կա իմ սրտում - բոլորը քեզ.
Ինչքան կրակ ու վառ խնդում - բոլորը քեզ -
Բոլո՜ր ը տամ ու նվիրեմ, ինձ ո՛չ մի՛ հուր թող չմնա՝
Դո՜ւ չմրսես ձմռան ցրտում,- բոլո՜ր ը քեզ...

***

Ջինջ ճախրում են ղողանջները հորիզոնից - հորիզոն
- Ինչ տրտո՜ւմ է, կապո՛ւյտ աղջիկ, հրաժեշտի երեկոն...

Տրտմություն ու լույս է իջել քո աչքերում, իմ հոգում,
Օրհնե՛նք, օրհնե՛նք այս երկրային հրաժեշտի երեկոն...

Եվ թող հալվե՛ն, ձուլվե՛ն, մարվե՛ն իրիկնային կապույտում
Մեր կույս հոգու իրիկնային սպասումները տրտում:

Եվ զանգերը անրջորեն, հորզոնից - հորիզոն,
Օրհներգելով թող օրորեն հրաժեշտի երեկոն...

***

Իրիկուն է, քո՛ւյր,- աչքերդ փակի՛ր,
Հոգնաբեկ, տխուր,- աչքերդ փակի՛ր,

Թարթիչներդ թող չթարթեն միգում,
Միգամած ու խոր աչքերդ փակի՛ր:

Կոպերիդ տակ թող երազս թաղեմ,
Իրիկուն է, քո՛ւյր,- աչքերդ փակի՜ր...